# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
# «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-33/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
# ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

27.06.2024թ.
ժամը $11^{30}$

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ՝ Հ. Մելիքյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՖՊ և սպորտի ծառայության մարզական աշխատանքների կազմակերպման և մարզական ունեցվածքի հաշվառման բաժնի սպա, կապիտան Ա. Վիրաբյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մինասյան:

**Բացակայում է՝**

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՖՊ և սպորտի ծառայության մարզական աշխատանքների կազմակերպման և մարզական ունեցվածքի հաշվառման բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Ա. Սաղաթելյանը:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ ՊՆ ԳԿ վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ներսիսյան:

**«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-33/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ս. Ներսիսյան)

1. ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 25.06.2024թ. №Ե/1520-24 գրությունը (այսուհետ՝ ՊՎԾ ղեկավարի գրություն) գրությունը քննարկելու և դրա հիման վրա համապատասխան որոշում կայացնելու մասին.

2.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-33/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին որոշման մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 25.06.2024թ. №Ե/1520-24 գրությունը (այսուհետ՝ ՊՎԾ ղեկավարի գրություն) գրությունը քննարկելու և դրա հիման վրա համապատասխան որոշում կայացնելու մասին.**

(Ս. Ներսիսյան)

**1.1** Քննարկելով ՊՎԾ ղեկավարի գրությունը (կցվում է) և հիմք ընդունելով այն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԱՐՄՖՈՐՍ» ՍՊԸ-ի հայտը հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՊՎԾ ղեկավարի գրության՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի, «ԱՐՄՖՈՐՍ» ՍՊԸ-ի իրական շահառու, 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում Արման Մանժուրի Գրիգորյանը:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը (այսուհետ՝ Ծառայություն) հասանելի տեղեկատվական համակարգերում, տվյալների շտեմարաններում և Տեղեկագրում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Արմտեքստիլ» ՍՊԸ-ն 2024 թվականի մարտի 23-ից 2026 թվականի մարտի 23-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: «ԱՐՄՖՈՐՍ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Արման Մանժուրի Գրիգորյանի և «Արմտեքստիլ» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ «ԱՐՄՖՈՐՍ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Արման Մանժուրի Գրիգորյանը հանդիսանում է «Արմտեքստիլ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտն ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

Կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ինչպես արդեն նշվել է, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԱՐՄՖՈՐՍ» ՍՊԸ-ի հայտը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2 . Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-33/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին որոշման մասին.**

---

(Ս. Ներսիսյան)

2.1 Հայտերի բացման և գնահատման, ինչպես նաև «ԱՐՄՖՈՐՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում՝ 27.06.2024թ., «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-33/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ, ներկայացված գնային առաջարկների հիման վրա, ընտրված մասնակից ճանաչվեցին հետևյալ մասնակիցներ՝ **Ըստ Հավելված 1-ի**

**Հավելված 1**

| Հ Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Մեկ միավորի գինը (դրամ) | Նախահաշվ. գումարը | | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | | ընտրված մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | անվանումները | գնային առաջարկները | | | |
| | | | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհանուր գինը | |
| 1 | Սաղավարտներ (Սաղավարտ բռնցքամարտի) | հատ | 20 | 9000 | 180,000 | 1 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ | 116400 | 0 | 116400 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ |
| 3 | Նետման համար նախատեսված թիրախներ (նետման մարզական դանակներ) | հատ | 200 | 15000 | 3,000,000 | 1 | «Աստղիկ» ՍՊԸ | 2333333.33 | 466666.7 | 2800000 | «Աստղիկ» ՍՊԸ |
| 4 | Վայրկյանաչափ (վայրկյանաչափ (էլեկտրոնային)) | հատ | 50 | 6500 | 325,000 | 1 | «Կիմա Խաչատրյան» ԱՁ | 248500 | 49700 | 298200 | «Կիմա Խաչատրյան» ԱՁ |
| 5 | Փայտե արկղեր (Ֆիզիկական պատրաստության կրովի արկղ) | հատ | 75 | 30000 | 2,250,000 | 1 | «Էս թի էյ» ՍՊԸ | 1686250 | 337250 | 2023500 | «Էս թի էյ» ՍՊԸ |
| 6 | Ֆուտբոլի գնդակներ (գնդակ ֆուտբոլի մարզումային) | հատ | 600 | 9000 | 5,400,000 | 1 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ | 2088000 | 0 | 2088000 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ |
| 8 | Գնդակներ (ծանր գնդակ) | հատ | 5 | 20000 | 100,000 | 1 | «Կիմա Խաչատրյան» ԱՁ | 64000 | 12800 | 76800 | «Կիմա Խաչատրյան» ԱՁ |
| 9 | Վոլեյբոլի գնդակներ (գնդակ վոլեյբոլի մարզումային) | հատ | 300 | 6500 | 1,950,000 | 1 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ | 885000 | 0 | 885000 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ |
| 10 | Գործված ցանցեր (ցանց ֆուտբոլի դարպասի) | հատ | 45 | 25000 | 1,125,000 | 1 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ | 626400 | 0 | 626400 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ |
| 11 | Գործված ցանցեր (ցանց վոլեյբոլի (տռոսով)) | հատ | 45 | 13000 | 585,000 | 1 | «Լայթսպորտ» ՍՊԸ | 451000 | 90200 | 541200 | «Լայթսպորտ» ՍՊԸ |
| 12 | Սեղանի թենիսի գնդակներ (սեղանի թենիսի գնդակներ) | հատ | 1000 | 80 | 80,000 | 1 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ | 44000 | 0 | 44000 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ |
| 13 | Մարմնամարզական պարաններ | հատ | 10 | 30000 | 300,000 | 1 | «Կիմա Խաչատրյան | 247500 | 49500 | 297000 | «Կիմա Խաչատրյան» |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | (ձգման պարան) | | | | | | » ԱՁ | | | | ԱՁ |
| 14 | Մարմնամարզակ ան պարաններ (մագլցման պարան) | հատ | 5 | 20000 | 100,000 | 1 | «Կիմա Խաչատրյան » ԱՁ | 82000 | 16400 | 98400 | «Կիմա Խաչատրյա ն» ԱՁ |
| 15 | Չափիչ քանոն, շինարարական (չափման մետր ժապավենով) | հատ | 20 | 5500 | 110,000 | 1 | «Սիթի Սպորտ» ՍՊԸ | 86000 | 0 | 86000 | «Սիթի Սպորտ» ՍՊԸ |
| 16 | Գործված ցանցեր (սեղանի թենիսի ցանց) | հատ | 30 | 3000 | 90,000 | 1 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ | 74400 | 0 | 74400 | «Մամիկոն Ավետիսյան » ԱՁ |
| 17 | Հատակածածկույ թներ (ծանրամարտի պատվանդամի ռետինե ծածկույթ) | քմ | 600 | 16500 | 9,900,000 | 1 | «Լայթսպորտ » ՍՊԸ | 4882000 | 976400 | 5858400 | «Լայթսպոր տ» ՍՊԸ |
| 18 | Մարզագունդ (հանտել) | հատ | 150 | 15000 | 2,250,000 | 1 | «ՎԱՆՏԵԽՄ ԱՍ» ՍՊԸ | 1500000 | 300000 | 1800000 | «ՎԱՆՏԵԽ ՄԱՍ» ՍՊԸ |
| 20 | Բացօթյա սպորտի սարքեր (կողմնորոշման ստուգողական կետի կայան) | հատ | 15 | 40000 | 600,000 | 1 | «Ասողիկ» ՍՊԸ | 500000 | 100000 | 600000 | «Ասողիկ» ՍՊԸ |
| 21 | Բացօթյա սպորտի սարքեր (կողմնորոշման ստուգողական կետի գրանցման քարտ) | հատ | 25 | 6000 | 150,000 | 1 | «Ասողիկ» ՍՊԸ | 125000 | 25000 | 150000 | «Ասողիկ» ՍՊԸ |
| 22 | Նավիգացիայի և տեղանքի որոշման գլոբալ համակարգեր (gps կամ համարժեք) | հատ | 35 | 40000 | 1,400,000 | 1 | «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ | 939167 | 187833 | 1127000 | «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ |
| 23 | Պարաններ (բաժանարար պարան) | մետր | 500 | 750 | 375,000 | 1 | «Քանան Ընդ Յան» ՍՊԸ | 360000 | 72000 | 432000 | «Քանան Ընդ Յան» ՍՊԸ |
| 24 | Մկանների ամրապնդման ձգվող ժապավեններ (ռետինե ժապավեն ֆիթնեսի) | հատ | 90 | 10000 | 900,000 | 1 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ | 558000 | 0 | 558000 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ |
| 25 | Մարմնամարզակ ան պարագաներ՝ մագլցման համար (կախովի պտտաձող, զուգափայտ, որովայնի մարզասարք) | հատ | 100 | 40000 | 4,000,000 | 1 | «Լայթսպորտ » ՍՊԸ | 3319000 | 663800 | 3982800 | «Լայթսպոր տ» ՍՊԸ |
| 27 | Բռնցքամարտի ձեռնոցներ | զույգ | 20 | 10000 | 200,000 | 1 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ | 98000 | 0 | 98000 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ |
| 28 | Բռնցքամարտի մարզաթաթ (լապա) | հատ | 10 | 11899 | 118,990 | 1 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ | 37000 | 0 | 37000 | «Մամիկոն Ավետիսյան» ԱՁ |
| 29 | Սեղանի թենիսի ձեռնաթիակներ (ռակետ սեղանի թենիսի) | հատ | 60 | 1550 | 93,000 | 1 | «Քանան Ընդ Յան» ՍՊԸ | 65833.33 | 13166.6 7 | 79000 | «Քանան Ընդ Յան» ՍՊԸ |

2.2 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-33/1» ծածկագրով ընթացակարգը 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով, գնահատող հանձնաժողովի որոշմամբ, հայտարարվեց չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը (պայմանագիր չի կնքվում), իսկ 2-րդ և 26-դ չափաբաժինների մասով՝ 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

2.3 Հանձնաժողովը որոշեց սահմանել նոր անգործության ժամկետ (սույն ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով) և ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-33/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Ա. Վիրաբյան |
| Գնահատող | Ա. Մինասյան |
| Գնումները համակարգող՝ | Ս. Ներսիսյան |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
## ՂԵԿԱՎԱՐ

Ե/1520-24 0077, ք⍰ Երևան, Մ⍰ Մաշտոցի պողոտա 47
25 Հունիսի, 2024թ⍰

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**
**ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Պապիկյան,**

Ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունն(այսուհետ՝ Ծառայություն)իրականացրել էՀՀ պաշտպանության նախարարությանկարիքների համար 2024 թվականի մայիսի17-ին տեղեկագրում *(օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք, այսուհետ՝ Տեղեկագիր)* հրապարակված թվով 29 չափաբաժնում խմբավորված **մարզական գույքի**ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-33/1»**ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ)վերլուծություն, որի արդյունքում պարզվել է՝

Ընթացակարգի շրջանակում 2024 թվականի մարտի 14-ին Տեղեկագրում հրապարակվել էպայմանագիր կնքելու մասին հայտարարությունը **(Փ1)**, ըստ որի՝ 11-րդ, 14-րդ, 16-րդ, 19-րդ և 29-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվելնվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Արմֆորս» ՍՊ ընկերությունը(ՀՎՀՀ՝ 00500605, այսուհետ՝ Ընկերություն):

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝Ընկերության իրական շահառու, 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում Արման Մանժուրի Գրիգորյանը**(Փ2)**:

Ծառայությանը հասանելի տեղեկատվական համակարգերում, տվյալների շտեմարաններում և Տեղեկագրում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Արմտեքստիլ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00498117) 2024 թվականի մարտի 23-ից

մինչև 2026 թվականի մարտի 23-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ուշագրավ է այն, որ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Արման Մանժուրի Գրիգորյանի և «Արմտեքստիլ» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Արման Մանժուրի Գրիգորյանը հանդիսանում է նաև«Արմտեքստիլ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի բաժնեմասի սեփականատեր և տնօրեն(Փ3):

Համաձայն «Գնումների մասին» օրենքի(այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ)119-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ***ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված***, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

***գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,***

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

Ընդ որում՝ Կարգի 121-րդ կետի համաձայն՝ **մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:**

Ընթացակարգի հրավերի մաս 1-ի 8.14կետի համաձայն՝ «*Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: (...)*»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը՝ առաջարկում ենքառաջնորդվելով սահմանված իրավակարգավորումներով գնումների գործընթացը համապատասխանեցնել ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանվածպահանջներին՝ արդյունքների մասին տեղեկացնելով Ծառայությանը:

Առդիր՝ 3 (երեք) նիշք:

25.06.2024

ՀԱՐԳԱՆՔՈՎ X ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

*Կատարող՝ Գևորգ Սմբատյան*
*Ստորաբաժանում՝ Գնումների գործընթացների վերահսկողության վարչություն*
*Հեռ.՝ 010-31-32-34*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-06-25

# «ԱՐՄՏԵՔՍՏԻԼ»
# Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

| | |
|---|---|
| Գրանցման համար | 278.110.1184092 |
| Հիմնադրման տարի | 2021 |
| Գրանցման ամսաթիվ | 2021-06-25 |
| Գործունեության ժամկետ | Անժամկետ |
| Կարգավիճակ | Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն: |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) | 52715148 |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | 00498117 |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) | 44714092 |
| Էլ. փոստ | - |
| Կայք | - |

**Գտնվելու վայրը**

| | |
|---|---|
| Հասցե | ԱՐՑԱԽԻ Թ-Ղ. / Տ / 56 ԷՐԵԲՈՒՆԻ 0041 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |
| Հեռախոս | 98999908 |

**Գործադիր մարմնի ղեկավար**

| | |
|---|---|
| Պաշտոն | Տնօրեն |
| Անուն Ազգանուն | ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՆԺՈՒՐԻ |
| Անձնագրային տվյալներ | BA3569824 2021-05-27 009 |
| Հասցե | ԱՐՑԱԽԻ Թ-Ղ. / Տ / 56 ԷՐԵԲՈՒՆԻ 0041 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ԿՆԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-10-07

# «ԱՐՄՖՈՐՍ»
# Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

| | |
|---|---|
| Գրանցման համար | 278.110.1198907 |
| Հիմնադրման տարի | 2021 |
| Գրանցման ամսաթիվ | 2021-10-07 |
| Գործունեության ժամկետ | Անժամկետ |
| Կարգավիճակ | Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն: |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) | 52863299 |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | 00500605 |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) | 44118907 |
| Էլ. փոստ | - |
| Կայք | - |

**Գտնվելու վայրը**

| | |
|---|---|
| Հասցե | ԱՐՑԱԽԻ ԹԱՂԱՄԱՍ / Տ / 56 ԷՐԵԲՈՒՆԻ 0041 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |
| Հեռախոս | - |

**Գործադիր մարմնի ղեկավար**

| | |
|---|---|
| Պաշտոն | Տնօրեն |
| Անուն Ազգանուն | ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՆԺՈՒՐԻ |
| Անձնագրային տվյալներ | BA3569824 2021-05-27 009 |
| Հասցե | ԱՐՑԱԽԻ Թ.ՂՄ. / Տ / 56 ԷՐԵԲՈՒՆԻ 0041 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-06-25
«ԱՐՄՏԵՐՍՏԻԼ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

### Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրանցված չեն**

### Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ 10000

### Մասնակիցներ

| Անուն Ազգանուն / Անվանում | Գրանցամատյանում գրառման ամսաթիվ | Բաժնեմասի չափը | Բաժնեմասի չափը ՀՀ դրամով | |
|---|---|---|---|---|
| ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՆԺՈՒՐԻ<br>Անձնագիր h/h BA3569824 տրվ. 009 ի կողմից<br>Հասցե՝ ԱՐՅԱԽԻ ԹՂՄ. / Տ / 56 ԷՐԵԲՈՒՆԻ 0041 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ | 2021-06-25 | 100 % | 10000 | |

### Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

| Գրանցման ամսաթիվ | Փոփոխություններ |
|---|---|

Քաղվածքը տրամադրող՝ ____________________ **Անի Ղազարյան**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **2021-06-25**

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-10-07
«ԱՐՄ ՖՈՐՄ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրանցված չեն**

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ **10000**

## Մասնակիցներ

| Անուն Ազգանուն / Անվանում | Գրանցամատյանում գրառման ամսաթիվ | Բաժնեմասի չափը | Բաժնեմասի չափը ՀՀ դրամով | |
|---|---|---|---|---|
| ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՆԺՈՒՐԻ<br>Անձնագիր h/h BA3569824 տրվ. 009 ի կողմից<br>Հասցե՝ ԱՐՑԱԽԻ ԹՂՄ. / Տ / 56 ԷՐԵԲՈՒՆԻ 0041 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ | 2021-10-07 | 100 % | 10000 | |

## Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

| Գրանցման ամսաթիվ | Փոփոխություններ |
|---|---|

Քաղվածքը տրամադրող՝ ________________ ՏԻԳՐԱՆ ՉԱԼԱԲՅԱՆ
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 2021-10-07